

ըլլալ» Հայկական արուեստին մէջ եղած իբր թէ Չինական փոխառութեանց համար: Այդպիսի ազդեցութիւն մը կամ ազդեցութեան միջնորդութիւն մը պէտք էր որ ամենէն առաջ երեւէր մեր մանրանկարչական արուեստին մէջ, որ սակայն իր խորքին մէջ կը պակսի, եւ ուր հետքեր կան Արարականին. ակնարկութիւնս հայ աշխարհիկ մանրանկարչութեան մասին է. օր. խորանի կազմութեան եւ թռչնոց, կենդանեաց ու բոյսերու ձեւերուն:

Եթէ Չինական շատ մանր մունր հետքեր ուզենք տեսնել Հայ գորգաշինութեան գծարուեստին մէջ, ատոնք եղած են Արար տիրապետութեան վերջին շրջանին, իսկ Սելճուքեաններուն սկզբնականին՝ երբ սակայն Պարսիկ Գորգաշինութիւնը գոյութիւն չունէր դեռ, եւ Պարսիկ գծագրական արուեստն իսկ զուտ չինական բան մըն էր Հայկականին հակոտնեայ իր բնապատկերումը, որմէ մերոնք հեռու մնացին:

Mr. Pope խնդր մ'ալ կը յարուցանէ «Թրքական ծագմամբ Մահմետական... ցեղ մը որ հաւանաբար կապածեւ հիւսուածքը Արեւմտեան Ասիա ներմուծեց, ցեղ մը որ զանազան գործեր չըրաւ բազմաթիւ տարբեր տէրօրու համար (Հայոց կ'ակնարկէ), բայց որ աշխատեցաւ իրեն համար եւ հիւսեց իրեն գորգերը:... Համաձայն շատ որոշ աւանդութեանց, որ մինչև վերջերս յամառօրէն կը յիշուին կովկասի մէջ, թէ վիշապ գորգերը հիւսուած են թրքական ծագմամբ մանր ցեղէ մը որ ԺԳ դարուն կասպից ծովուն հիւսիսային շրջանէն եկաւ կովկաս, փախչելով թիմուրի ճնշումէն եւ իրեն հետ բերելով Չինական գծաձեւեր որոնք աւելի վաղ ժամանակներուն միջին Ասիոյ ներկայացուած էին Մոնղոլներու կողմէն»: Այս անհեթեթ վարկածին արդէն պատասխանած եմ<sup>2</sup>, որով հոս զայն կրկնելու կը զգուշանամ. միայն որոշ է թէ գորգաշինութիւնը (կապածեւ հիւսուածքը) Ը-թ դարէն իսկ գոյութիւն ունէր ի Հայս. ու այսպէս Mr. Pope-ի տեսութեանը պատասխանել աւելորդ իսկ է: Նոյն այս հեղինակը ըրած է ուրիշ

դիտողութիւններ ալ, որոնց, ինչպէս ըսի, հատիկ հատիկ պատասխանելու նեղութիւնը կատարած եմ, իսկ մասնաւոր դիտողութիւն մը՝ որ դարձեալ իրն է՝ աւելի վերջը նկատի առնել ստիպուած եմ, նախ ստիպողական ըլլալով ծանրանալս ուրիշ կէտի մը վրայ զոր վերապահեցի յաջորդող տողերուն, թէև իրապէս աւելի առաջ խօսելու էի:

Երբ քրիստոնէութիւնը Հայոց մէջ հաստատուեցաւ, վիշապն ալ, ինչպէս ըսի, ինկաւ իր գրաւած բարձրութենէն, դիրք մը որ արդէն խախտած էր Արիական - Պարթեւական ազդեցութեան տակ: Քրիստոնեայ Հայ Ս. Հայրերը սկիզբէն իսկ չըացնել աշխատեցան վիշապին ազդեցութիւնը ամէն բանի մէջէն որ կրօնքին հետ կապ ունէր: Վիշապը այսպէս չէզոքացուեցաւ: Նոյն իսկ գիտական կերպով հայ գիտուն կղերք ուզեց պարզել վիշապին խորհրդաւորութիւնը. մեծ հետաքրքրութեամբ և ուրախութեամբ հետեւեցայ և օրինակեցի Յովհաննէս սարկաւազ վարդապետի այդօրինակ մէկ գրութիւնը՝ զոր կը յուսանք ի մօտոյ թերթիս մէջ հրատարակել: Արհեստներուն և գրականութեան մէջ, ժողովրդեան հաւատալիքներուն, աւանդութեանց, սովորութեանց մէջ քարէ վիշապը անցեալին մէկ վիժածը նկատուեցաւ, անոր տեղ քրիստոնէական օծմամբ ուխտատեղիներ հաստատուեցան: Կիրակոսի պատմած Յովհաննէս Օմնեցիի Ուժուն աւանին մօտ պատահած վիշապներուն օրինակին պէս, ուր որ քրիստոնէութիւնը չկրցաւ բնաջինջ ընել վիշապը, զայն քրիստոնէական հրաշքով մը սրբացուց, քրիստոնեայ մկրտեց և թողուց որ ժողովուրդը շարունակէ պաշտել, ու հետզհետէ վիշապը (որ ջուրէն անբաժան էր) ռամիկին մտքին մէջէն ջրնջուեցաւ, և սակայն ջուրը մնաց իբր պաշտաման ուխտատեղի: Քրիստոնէու-

1. Հայկական Վիշապ Գորգերու Առասպելը - Թարգ. Անդլ. իմ կողմէս. Բազմավէպ 1930 թ 382. — 2. Իմ նոյնին պատասխանս. Բազմավէպ 1930 թիւ 10.